

թիւնը. Նա պարունակում է 12 ինքնուրոջ լողւածներ, որոնցից շատերը ուրիշ տեղերում հրատարակւած էին. Սկսում է նա մի պաշտպանողական գրւածքով իւր Հռովմ ուղարկւելու մասին 1849 թ., իր Օդիլլօն Բարրոից գեներալ Ուախնօին ուղարկած գիպլօմատական ազենու, որպիսի պաշտօնում նա, սական, գեներալ և դեսպան Ինչնվալի հետ կունց, մինչև որ նա, թէ իւր գիպլօմատական անփորձութեան և թէ իշխան-

նախագահի (լետագակ Նասոլէօն Ակավորի) երկդիմի քաղաքականութեան պատճառով, լանկարծ բառ կանչւեց, Տհաճութիւնը իւր անաջողութեան համար տեղիք տեսց նորանդիպլօմատիալից միանգաման հեռանալ և մի ճանապարհով զնալ, որը նորան գէպի անմահութիւնը պլատիտանէր. Ալդ հատորի մէջ կան ուսւածքներ իսպանական գրող Զէմ Բալմէսի վերաբերեալ:

ԳԱՍՊԱՐԻ, ԱԴՅՈՒ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԵՐԿՐՈՐԴ Հատոր, 1888 թ., Բերլին, V+704 երես, գինը՝ 12 մարկ (5 բուբլի):

Այս աշխատանքի առաջին հատորը լուս տեսաւ 1886 թւականին. Նա տալիս է խոալական գրականութեան պատմութիւնը սկզբից մինչև Պետրարկա: Ներկայ երկրորդ հատորը սկսում է Յօկկաչիո-ովի: Նախ խօսում է ալդ երկու մեծ բանաստեղծների էպիգոնների մասին, գրականութեան մասին 15-րդ դարում և նոյնը 16-րդ դարուց մինչև հակա-րեֆորմացիաի ժամանակը. Դիմաւոր հեղինակները 16-րդ դարու Տասսօ-լց առաջ, որպէս Մաքիավելի, Բեմբո, Արիօստո, որպէս նաև քնարերգութիւնը (Միրիկ), վէպը (Էպօս), ողբերգութիւնը և կատակերգութիւնը սովորածութեան լուսեցւած: Մասնագէտները վերաբերեւում են այս հատորին նոյն գովասանքով, որպէս և ա-

ռաջին հատորի նկատմամբ և զաւնոյն հիմնաւոր նախապատրաստական ուսումնասիրութիւնները, քննադատական անկախութիւնը, լիուլի օգուտ քաղելը մօնոպրաֆիական գրականութիւնից, ճարպիկ նկարագրութիւնը, հեղինակների աջողած բնաորոշումը և ալլե: Մանաւանդ գովում են ան, որ մեծ ուշագրութիւնը է զարձրած լատինական գրականութեան վերակ, որը այնքան մեծ նշանակութիւն ունէր համանիզմի դարում, որի համար, իր պատւական օժանդակ, ծառակել են Գէորգ Ֆուղար (Georg Voigt) երկերը: Շատ աջողած է Դևիկամերօնի վերաբերեալ գլուխը, իսկ կատաղի Ուղանդի մասին կան մի քանի նոր և սրամիտ գիտողութիւններ: Որպէս առաջին,

Նունպէս և այս երկրորդ հասորի վեր- | կան և քննադատական ծանօթու-
ջում կցած է աՅաւելւած գրախոսու- | թիւններից:

ԳՈԼԴԹԻՀԵՐ, ԻԳՆԱՅ. ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՈՒՍԻԱՇՔՆԵՐ, (Muhamme-
danische Studien): Առաջին մաս, Հալէ, 1889 թ., տպ. Նիմայէր,
XII+280 էրես, գինը՝ 8 մարկ (մօտ $3\frac{1}{2}$ բուբլի):

Ակս զիրքը, որպէս ձեռնհաս
զիտնականները վկազում են, վերջին
տարիներումն իսլամական հետադօ-
սութիւնների ասպարիզում լուս տե-
սած գրքերից ամենանշանաւորներիցն
է. դա մի զիրք է, որը, մատնադիտական
շրջանից դուրս, պէտք է հետաքրքրէ
պատամութեան, կրօնադիտութեան,
մաստամի նաև մարդաբանութեան
(անթրոպոլոգիալի) ներկագացուցիչ-
ներին. Կարճ ասած, նու ցուց է տա-
լիս արաբական աղղակնութեան
կազը Մահմեդի կրօնի հետ. Գիրքը
սկսում է հետազոտութիւնով, թէ ա-
շարբների սպառողութիւնը, աշխար-
հաւեցողութիւնը և քաղաքական
կազմը ի՞նչ զիրք պէտք է ստեղծէին
նոր հաւատի համար և թէ ադր չըր-
ջանում գործող առանձնակատկու-
թիւնները ի՞նչ աղղեցութիւն պէտք

է գործէին խալամի զարգացման վե-
րակ խալիֆների ժամանակ.
Յականի է Գօղցիհերի (որը ուն-
գարացի է) գրեթէ անհաւատալի հա-
րուստ ծանօթութիւնը արաբական
զանազան ասպարէզների հետ, մաս-
նաւորապէս բանաստեղծութեան, լե-
զուագիտութեան, մահմեդական ա-
ւանդութիւնների, կրօնի և իրաւա-
գիտութեան հետ. Անկարելի է
մի գրախոսական նկատողութեան
մէջ այս զրբի բոլոր արժանաւորու-
թիւնների մասին խօսել, որոնց կա-
րևորագոնը նորա մէջն է կալանում,
որ հեղինակը, նաև բազմաթիւ ման-
րամասնութիւնների մէջ, չի մո-
ռանում գրքի գլխաւոր գաղա-
փարը.